

ԲԱՑԱՅԱՅՏԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՏԻՊԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

Բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը ժամանակակից հայերենում և գերմաներենում ցուցաբերում է մի շարք առանձնահատկություններ, որոնք կախված են բացահայտիչի լրացական բնույթից: Վերջինս տարբերվում է գոյականական անդամի մյուս լրացումներից նաև իր քերականական ձևավորմամբ և տրոհված լինելու հատկանիշով¹:

Ժամանակակից հայերենի քերականագիտության մեջ բացահայտիչը, համարվելով անվանական լրացում, չունի միանշանակ բնութագիր: Անցյալի քերականները այն համարել են նաև հատուկ անուն որոշիչ (Ա. Սյտրնյան, Ս. Պալասանյան)²: Ըստ Մ. Աբեղյանի «բացահայտիչ ասվում են այն գոյական վերադիրները, որոնք դրվում են անվան կամ դերանվան վրա ետևից՝ այն հոլովով, որով դրված է բացահայտյալը, այսինքն այն անունը կամ դերանունը, որի նշանակությունը որոշում է բացահայտիչը»³:

Ժամանակակից հայ քերականների մեծ մասի մոտ բացահայտիչը ունի զրեթե նույն սահմանումը՝ ձևակերպման որոշակի տարբերությամբ, այն է՝ բացահայտիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս նրա ով կամ ինչ լինելը, բացահայտում, պարզաբանում է լրացյալը, մասնավորեցնելով, որոշակիացնելով այն, ունի ետադաս դիրք, սովորաբար համաձայնում է իր բացահայտյալի հետ թվով, հոլովով, հոդառությամբ և հատուկ արտաբերումով անջատվում է նրանից⁴: Երբեմն նշվում է, որ բացահայտիչն ու բացահայտյալը համաձայնում են ոչ թե հոլովով, այլ գերադաս բայն է թելադրում վերջիններիս հոլովը: Սակայն ըստ Ռ. Իշխանյանի, ոչ բոլորդեպքերում կարելի է ընդունել այդ փաստարկը, նշելով, որ ամեն դեպքում որամեն դեպքում բացահայտիչի և բացահայտյալի միջև կա կապակցություն, ինչպես օրինակ՝ ենթակա բացահայտյալի և իր բացահայտիչի դեպքում, օրինակ՝ Տղան՝ այն բարձրահասակը, զնում էր տուն/հեռացավ/մոտեցավ մեր խմբին... (ստորոգյալը չի թելադրում

¹ Տես Ա. Մարության, Տրոհվող լրացումները արդի հայերենում, Եր. 1975, էջ 84

² Տես Ա. Գյուլբուդադյան, Ժամանակակից հայերենի շարահյուսություն (պարզ նախադասություն), Երևան 1988, էջ 159:

³ Տես Մ. Աբեղյան, Երկեր, հատոր 6, Երևան 1974, էջ 320:

⁴ Տես Մարության 1975, Առաքելյան 1958, Ասատրյան 1987, Աբրահամյան և ուրիշներ 1976, Աբրահամյան և ուրիշներ 1975, Աբրահամյան 1981 և 2004, և այլն:

ենթակայի հոլովը)⁵: Ա. Սարուքյանը նշում է նաև, որ բացահայտիչը մասնավորեցնում է նաև իր լրացյալի տեղնու ժամանակը⁶: Ըստ Ա. Աբրահամյանի բացահայտիչը իր դերով մոտ է որոշչին, սակայն տարբերվում է նրանից իր էությանը, այսինքն՝ որոշիչն ունի հատկանշային բնույթ, իսկ բացահայտիչը բնույթով համապատասխանում է բացահայտյալին, նաև իր բերականական մասնավորող հատկանիշներով հանդերձ, այսինքն առարկայական կամ գոյականական բնույթի լրացում է:

Բացահայտիչը մոտ լինելով որոշչին, այնուամենայնիվ տարբերվում է նրանից, ընդ որում ունենալով առարկայական բնույթ, այսինքն՝ արտահայտվելով գոյական անվամբ, իր կազմում կարող է ունենալ լրացումներ՝ արտահայտված տարբեր խոսքի մասերով⁷: Օրինակ՝ *Կենտրոնը կազմում էր տանտիրուհու դուստրը՝ շիկահեր, փղոսկրիպես փայլուն, մաքուր ատամներով և գեղեցիկ աչքերով քսան տարեկան* Լուիզան⁸, Die dritte junge Dame war Hulda Niemeyer, *Pastor Niemeyers einziges Kind*⁹.

Գ. Ջահուկյանը, ներկայացնելով բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը որպես բացահայտական բառակապակցություն, նշում է, որ և բացահայտիչը, և բացահայտյալը միևնույն դեմոստատն են նշանակում, այլ կերպ ասած՝ բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջառկա են միևնույն առարկայի լեզվական տարբեր նշանակումներ, որոնցից բացահայտիչը այլ առումով կամ բառերով որոշում է բացահայտյալի իմաստը¹⁰: Գ. Ջահուկյանը գոյականական լրացումների շարադասական փոխհարաբերության մեջ կարևորում է նաև լրացումների և լրացյալի սերտության աստիճանը, ըստ որի բացահայտիչը ավելի քիչ սերտորեն է կապված գոյականի հետ, ի տարբերություն հատկացուցչի կամ որոշչի:

Լեզվաբանների մի մասը բացահայտիչը լրացում չի համարում, ինչպես նաև նախադասության առանձին անդամ, այլ բացահայտյալի հետ է լինում նախադասության մեկ անդամ¹¹: Այտեղ հատկանշական է Ա. Խաչատրյանի «Բացահայտչի գնահատման շուրջ» հոդվածը¹², որտեղ հեղինակը քննելով բացահայտչի հատկանիշները, բերում է փաստարկներ, ըստ որոնց բացահայ-

⁵ Տես Ռ. Իշխանյան, Արդի հայերենի շարահյուսություն, Պարզ նախադասություն, Երևան 1986, էջ 167-168:

⁶ Տես Ա. Սարուքյան, Տրոհվող լրացումները արդի հայերենում, Եր. 1975, էջ 35:

⁷ Տես Աբրահամյան Ա., Ժամանակակից գրական հայերեն, Եր. 1981, էջ 291:

⁸ Ալեքսանդր Շիրվանզադե, Արտիստը:

⁹ Theodor Fonatane, Effi Briest:

¹⁰ Տես Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե. 1974, էջ 559:

¹¹ Տես Վ. Ավագյան, Հայոց լեզվի տեսության և ուսուցման հարցեր, Ե., 1980, էջ 56-59:

¹² Տես Ա. Խաչատրյան, Բացահայտչի գնահատման շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, 1(37), Ե., 1979, էջ 125-135:

տիչն ու բացահայտյալը իմաստային (համանշանակելի միավորներ) և քերականական (բազմակի անդամներ) հասկացություններն են, արտահայտում են նույն ծավալը ըստ հաղորդակցության նպատակի, և որ բացահայտիչը տվյալ իրադրության մեջ նոր բան չի ավելացնում բացահայտյալի իմաստին, ինչպես նաև նրանց միջև կարելի կիրառել մեկնական շաղկապներ՝ առանց իմաստային կորստի: Բացահայտչի կախումը բացահայտյալից պայմանավորված է միայն խոսքի գծային, հաջորդական բնույթով: Իսկ բացահայտիչ և բացահայտյալ եզրերի վերաբերյալ հեղինակը նպատակահարմար է համարում կիրառել *բացահայտական գուգորդության առաջին (նախորդող) և երկրորդ (հաջորդող) անդամներ* չեզոք արտահայտությունները: Ամփոփելով հոդվածը՝ Ա. Խաչատրյանը գալիս է եզրահանգման, որ բացահայտիչ անունով նախադասության առանձին անդամ չկա, իսկ բացահայտիչն ու բացահայտյալը հանդես են գալիս որպես համանիշ, համադաս միավորներ, կատարում են շարահյուսական միևնույն պաշտոնը, դառնալով յուրահատուկ բազմակի անդամներ:

Այնուամենայնիվ հայ քերականագիտության մեջ (համեմատաբար ավելի ուշ շրջանի), հաշվի առնելով և ընդունելով այս կամ այն փաստարկը, միևնույն է բացահայտիչը դուրս չի թողնում գոյականական անդամի լրացումների շարքից, համարելով վերջինիս յուրահատուկ լրացում (տես Մ. Ասատրյան, Ս. Գյուլբուդաղյան, Վ. Ավագյան, Ս. Աբրահամյան, Խ. Բաղիկյան և ուրիշներ): Ս. Գյուլբուդաղյանը փաստում է այն հանգամանքը, որ թեև հայ քերականները բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը համարում են գոյական անդամի լրացում, սակայն դուրս են թողնում բառակապակցությունների համակարգից՝ պատճառաբանելով, որ այն տրոհվող լրացում է, իսկ նման կապակցությունները բառակապակցություն չեն: Սակայն ըստ Ս. Գյուլբուդաղյանի տրոհումը չի կարող խանգարել լրացում-լրացյալ լինելու հանգամանքին, այսինքն դուրս թողնելով բառակապակցությունների համակարգից, մերժվում է նրա լրացում-լրացյալ հարաբերությունը, միևնույն ժամանակ համարվում գոյականական անդամի լրացում:

Մենք ևս համակարծիք լինելով այն բանին, որ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերությունը որպես այդպիսին ավելի շատ մոտ է ենթակա-ստորոգյալ փոխհարաբերությանը, այնուամենայնիվ քննում ենք այն որպես գոյականական անդամի լրացում, թերևս հաշվի առնելով այն, որ ժամանակակից գերմաներենում ևս բացահայտիչը չունենալով միանշանակ բնութագիր, այդուհանդերձ գոյականական անդամի լրացումների մեջ առանձնացվում է որպես որոշի հատուկ տեսակ:

Ինչպես նշվեց, ժամանակակից գերմաներենի քերականագիտության մեջ ևս չկա միասնական կարծիք բացահայտչի բնույթի վերաբերյալ: Այն մտնում է

մեկ «Attribut (լայն առումով)» (որոշիչ) հասկացության մեջ¹³, որտեղ բացահայտիչ հասկացության համար կիրառվում է Apposition¹⁴ տերմինը, ինչը լարիներենից «ap-positio» նշանակում է «Zusatz» (լրացում) նաև «Beisatz» (ավելացում, ավելադրում) ինչպես օրինակ՝ mein Onkel **Gerhard**, mein Freund, **eintoller Fußballspieler**,... Դեռ այդ պատճառով էլ, այն գերմանական քերականություններում ևս համարվում է առանձնահատուկ դեպք, սակայն ինչպես գոյականական անդամի մյուս լրացումները, այն ևս ամնիջականորեն որոշում է անվանը, այսինքն պարզ է այն, որ բացահայտիչները անվանական անդամի լրացումներ են, որոնք սակայն ընդհատում են շարահյուսական պրոգրեսիան (syntaktische Progression)¹⁵:

Գ. Բուսմանի լեզվաբանական բառարանում, բացահայտիչը ընդհանուր առմամբ բնորոշվում է որպես գոյականական լրացման առանձնահատուկ տեսակ, որը շարահյուսորեն և հարաբերակցորեն (referentiell) համաձայնեցվում է լրացյալի հետ, երկու բաղադրիչներն էլ դրվում են նույն հոլովով և վերաբերում են նույն արտաբեզվական վերաբերականին¹⁶, կամ այն համարվում է անվանական լրացում, որը այդ անվան հասկացության իմաստային ծավալը (Begriffsumfang) չի փոխում¹⁷:

Գրեթե բոլոր քերականների մոտ բացահայտիչը ունի հետևյալ հատկանիշները. 1. այն ներկայացվում է / արտահայտվում է գոյականով, որը նույնական է իր լրացյալի հետ և նրա հետ միասին գտնվում նույն հարաբերակցության մեջ միևնույն նշանակյալի / իրողության նկատմամբ, 2. այն դրվում է ամնիջապես իր լրացյալին մոտ և նախադասության մեջ չի կարող ազատ տեղաշաժվել, 3. այն կարող է նաև զեղչվել / բաց թողնվել, ինչպես նաև նախադասության մեջ փոխարինել իր լրացյալին¹⁸: Այս հատկանիշները նույնական են նաև հայերենի բացահայտիչի համար:

¹³ Գերմաներենում գոյականական անդամի լրացումները ընդգրկվում են մեկ ընդհանուր Attribut (որոշիչ լայն առումով) անվան տակ, որտեղ առանձնացվում են տեսակներ՝ ածական որոշիչ, գոյական որոշիչ, դերբայական որոշիչ և այլն: Ըստ երևույթին ընդունելով այն փաստը, որ այս բոլոր տարատեսակներն էլ այս կամ այն կերպ որոշում են գոյականական անդամին:

¹⁴ Apposition հասկացությունը Philipp von Zesen-ը (17-րդ դարի գերմանացի գրող, հիմնադրել է լեզվական հանրություն, որը նպատակ ուներ մաքրել գերմաներեն լեզուն օտար բառերից) բարձրանել է գերմաներեն Beifügung բառով, որը նշանակում է «կցում, հավելում»:

¹⁶ Steu K. A. Bednarek, Deutsche Syntax. Attribute, Studienarbeit, Norderstedt, 2002, էջ 22:

¹⁷ Steu Ch. Dürscheid, Syntax, Grundlagen und Theorien, Wiesbaden 2000, էջ 45

¹⁸ Steu P. Eisenberg, Grundriss der deutschen Grammatik, Band 2: Der Satz, Stuttgart 1999, էջ 250:

¹⁹ Steu G. Heibig/J. Busche, Deutsche Grammatik, ein Handbuch für Ausländerunterricht, Leipzig, 1999, էջ 506:

Այսպիսով՝ բացահայտիչ կարող են լինել գոյականական անդամի կամ գոյականաբար գործածվող անվան լրացումը, որը իր լրացական բնույթով բացահայտում, պարզաբանում, ճշգրտում կամ մասնավորում է իր լրացյալին¹⁹:

Ինչ վերաբերում է բացահայտչի տեսակների, երկու լեզուները այս հարցում ցուցաբերում են իրենց առանձնահատկությունները. Ընդհանուր առմամբ, ժամանակակից հայերենում տարբերում են բացահայտչի հետևյալ տիպերը. բուն կամ սովորական, մասնական և մասնավորող պարագայական, սակայն տարբեր քերականներ տարբեր կերպ են ներկայացնում այդ տեսակները. ինչպես օրինակ՝ Ռ. Իշխանյանը այս հիմնական տիպերից բացի առանձնացնում է նաև *տեղեկանքային* տիպը²⁰, Գ. Ջահուկյանը տարբերակում է բացահայտչի *սովորական, տրոհված և մասնական* տեսակները²¹, Ա. Սարուքյանը բացի վերը նշված հիմնական տեսակներից նշում է նաև *մեկնական* տիպը (Ռ. Իշխանյանը այս տիպը դիտարկում է սովորական բացահայտչի մեջ), մի շարք քերականների մոտ նշվում են միայն առաջին և երկրորդ տիպերը և այլն:

Ժամանակակից գերմաներենում ևս չկա միանշանակ մոտեցում բացահայտչի տեսակների վերաբերյալ, հիմնականում նշվում են բացահայտչի հետևյալ տիպերը՝ ազատ (կամ թույլ) (*lockere*) և սերտ (*enge*) բացահայտիչ (*Apposition*): Սակայն, ինչպես հայերենում, գերմաներենում ևս տարբեր քերականներ առանձնացնում են բացահայտչի տարբեր տեսակներ, ինչպես օրինակ՝ Դուդեն-Քերականությունը նշում է *enge Apposition*-ի փոխարեն *appositiver Nebenkern* (լրացուցիչ բաղադրիչ) տարբերակը, ընդ որում այստեղ առանձնացնելով ևս ենթատեսակներ (*determinativ / որոշող /, explikativ / բացատրական / և mehrteilige Eigennamen / բազմաբաղադրիչ հատուկ անուններ /*)²², ինչպես նաև առանձնացնում ևս երկու տեսակ՝ *մասնական* (*partitiv*) բացահայտիչ և *հետադաս մականունները* (*Beinamen*). Հելբրգ/Բուշան առանձնացնելով այս երկու տիպերը՝ մասնականը որպես առանձին տիպ չի նշում. Հ. Վանդորբը ընդհանրացնում է բացահայտչի այս տարբեր տեսակները երկու եզրույթներով՝ *Apposition* (բացահայտիչ) և *Juxtaposition* (համադրում, զուգորդում, կողք դնելը), ընդ որում հաշվի առնելով վերջինիս միայն շարադասությունը²³: Ու, ենզեղը բացահայտիչը ուղղակի սահմանում է որպես հետադաս որոշիչ և ստացվում է, որ բոլոր հետադաս որոշիչները բացահայտիչներ են իսկ առաջա-

¹⁹ Տես Ս. Աբրահամյան և ուրիշներ, Ժամանակակից հայոց լեզու, Ի. 3, Շարահյուսություն, Եր. 1976, էջ 207

²⁰ Տես Ռ. Իշխանյան, նշվ աշխ., էջ 165:

²¹ Տես Ս. Գյուլբուդադյան, նշվ աշխ., էջ 160:

²² Տես Duden, die Grammatik, Band 4, Mannheim 2005, էջ 990:

²³ Տես H. Weinrich, Textgrammatik der deutschen Sprache, Hildesheim, 2005, էջ 362-363:

դաս բացահայտիչների գոյությունը, ըստ սահմանման, պետք է բացառել: Ընդ որում, սերտ բացահայտիչները (enge Apposition) առհասարակ չեն համարվում բացահայտիչներ, այլ անվանական որոշիչներ. ընդ որում տարբերակելով Nomeninvariants (երբ «սերտ» բացահայտիչը չի համաձայնում լրացյալի հետ) և Nomenvariants (երբ «սերտ» բացահայտիչը համաձայնում է լրացյալի հետ) տիպերը²⁴: Որոշ քերականներ որպես բացահայտիչ տեսակ նշում են նաև als-ով գոյականական կապակցությունները:

Համեմատելով բացահայտիչի վերը նշված տեսակները՝ հայերենի *բուն* կամ *սովորական* բացահայտիչի դիմաց գերմաներենում ունենց *locken* (locker) տիպը: գերմաներենի մասնական (partitiv) բացահայտիչը տարբերվում է հայերենի մասնական բացահայտիչից նրանով, որ վերջինս վերաբերում է չափ ու քանակ, պարունակություն և հավաքականություն նշող բառերին (վերջինիս հարաբերակից են Art և Sorte գոյականներից, անձնական դերանուններից հետո դրվող բացահայտիչները, ինչպես նաև անորոշ դերանուններից հետո դրվողները), իսկ հայերենում մասնական է համարվում բացահայտյալի հետ *որպես, իբրև* և այլ բառերով կապված բացահայտիչը, որը մասնակիորեն է բացահայտում վերջինիս: գերմաներենում բացահայտիչի այս տիպին կարելի է հակադրել als-ով գոյականական կապակցությունները, թեև նման բառերով կիրառվող անվանական լրացումը որոշ քերականներ ընդհանրացնում են առաջին տեսակի տակ (Stb u Կ.-Յ. Յունգ 1995, Դ. Ծ. Էրոմս 2000), կամ ուղղակի բացառում՝ համարելով այն շաղկապային արտահայտություններ (Duden, Die Grammatik, 2005) կամ համարում դրանց մեջ բերումներ, քանի որ վերջիններս նախադասության մեջ կարող են ազատ տեղաշարժվել²⁵: Հայերենում բացահայտիչի *մասնավորող պարազայական* տեսակը վերաբերում է տեղի և ժամանակի պարազաներին (դառնալով բացահայտյալի հետ պարազա) ավելի կոնկրետացնելով կամ մասնավորելով բացահայտյալի բովանդակությունը, որը գերմաներենում մույնպես ներկայացվում է առաջին տիպի մեջ: Ինչ վերաբերում բացահայտիչի երկրորդ տեսակին, որը նշվում է գերմաներենում (enge Apposition նաև Juxtaposition /լատ. իրար կողքի դնել/²⁶, appositiver Nebenkern)²⁷, ապա հայերենում, այս տեսակը ընդհանրացվում է *բուն* (սովորա-

²⁴ Stb u Engel, Deutsche Grammatik, 2. Verbesserte Auflage, Heidelberg, 1991, էջ 627:

²⁵ Stb u E. Hentschel/H. Weydt, Handbuch der deutschen Grammatik, 3. Auflage, Berlin, 2003, էջ 402:

²⁶ գերմաներենում այն համարվում է սերտ (eng), քանի որ չի տրոհվում բացահայտյալից և կարող է լինել ինչպես նախադաս, այնպես էլ հետադաս և չի տրոհվում բացահայտյալից ի տարբերություն ազատ (locker) տիպի (G. Helbig/J. Buscha, 1999, P. Esenberg, 1999):

²⁷ Stb u Duden, նշվ. աշխ., էջ 997:

կան) տիպի հետ (գերմաներենում այս տիպը վերաբերում է հատկապես այն բացահայտիչ-բացահայտյալ կապակցություններին, որտեղ բաղադրիչ մաս են կազմում հատուկ անունները)²⁸ (օրինակ՝ Kaiser Wilhelm, Hotel «Ritter»): Ռ. Իշխանյանի կողմից նշված տեղեկանքային բացահայտիչը (փակագծերում դրված միջանկյալ բառ կամ բառակապակցություն²⁹) գերմաներենում որպես այդպիսին չի դիտարկվում, քանի որ դրանք հաճախ անկախ կապակցություններ կամ նախադասություններ են, դրվում են փակագծերում կամ առանձնացվում ստորակետներով և համարվում մեջքերումներ (Parenthese), և ներգրավված չեն որպես նախադասության անդամ, իսկ բացահայտիչը մյուս միավորների հետ կազմում է մի այնպիսի բաղադրիչ, որը նախադասության անդամի գործառույթ ունի³⁰: Դուդեն-Քերականության մեջ նշված հետադաս մականունները հայերենում ևս ներառվում են «սովորական բացահայտիչ» տեսակի մեջ, իսկ գերմանացի մյուս քերականները այն չեն առանձնացնում՝ համարելով սերտ (eng) բացահայտիչ:

Անդրադառնալով բացահայտիչի առանձնահատկություններին, նշենք, որ առաջին առանձնահատկությունը կայանում է նրանում, որ ի տարբերություն որոշիչի և հատկացուցչի, այն որպես կանոն թվով, դեմքով և հոլովով համաձայնում է իր լրացյալի հետ, այսինքն՝ բացահայտիչ-բացահայտյալ կապակցությունը քերականական համաձայնության մեջ են գտնվում և բացահայտիչը այդ տեսակերից կախման մեջ է գտնվում իր լրացյալի նկատմամբ: Ըստ Գ. Ջահուկյանի՝ թվային համաձայնությունը պարտադիր չէ, այն կարող է լինել իմաստային և ոչ թե քերականական, եթե կապակցության անդամներից մեկը հոգնակի է, իսկ մյուսը ցույց է տալիս բազմության անդամներն առանձին-առանձին, օրինակ՝ «վայրի կենդանիները՝ վագրը և առյուծը» կամ «վագրը և առյուծը՝ վայրի կենդանիները», իսկ մասնական բացահայտիչը միշտ անհոգ է³¹: Գերմաներենում ևս այս հարցում առկա են շեղումներ: Կան դեպքեր, որտեղ հոլովակալն համաձայնեցում տեղի չի ունենում, հատկապես սերտ բացահայտիչների դեպքում, որտեղ բացահայտյալը բացահայտիչից տարբերվում է հենց հոլովվելու հատկությամբ (որոշ բացառություններով), օրինակ՝ վերնագրերում, ազգակցական կապեր ցույց տալիս՝ *Onkel Huberts Auto* - «*Օնկելս Հուբերտս Աուտո*»³², երբեմն կարող բացահայտիչը դրվել տրականով, երբ բացահայտյալը դրված է սեռականով և կախում ունի կապից՝ *wegen des Sturms, einem wahren*

²⁸ Որոշ քերականներ այս տեսակի մեջ են ներառում Դուդեն-Քերականության մեջ նշված մասնական (partitiv) տիպը:

²⁹ Տես Ռ. Իշխանյան, նշվ. աշխ., էջ 175:

³⁰ Տես P. Eisenberg, նշվ. աշխ., էջ 250:

³¹ Տես Գ. Ջահուկյան, ժամանակակից հայերենի տեսության հիմունքներ, Ե. 1974, էջ 559:

³² «Մնան օրինակները գոյություն ունենալ չեն կարող:

Orkan – wegen des Sturms, eines wahren Orkans: Այս դեպքում բացահայտիչը կարող դրվել նաև ուղղականով, իսկ սեռականի ձևը շատ հազվադեպ է և հնացած³³:

Ըստ Խ. Բաղիկյանի, խոստով բացահայտիչը գործածում է, երբ ցանկանում է ավելի մասնավորել այն անձը կամ առարկան, որի մասին խոսում է, և որը առանց բացահայտիչի որոշակի չէ, իսկ վերջինս միշտ *հետադաս* է: Բացահայտիչը մեկնաբանում է նախադասության այն անդամին, որը արտահայտվում է գոյականով՝ ենթակա, խնդիր, հատկացուցիչ, պարագա, ստորոգելիական վերադիր, և եթե փոփոխվի բացահայտիչի և բացահայտյալի շարադասությունը, ապա կփոխվի նաև նրանց պաշտոնները³⁴: Այստեղից էլ հաջորդ առանձնահատկությունը կայանում է նրանում, որ հայերենում բացահայտիչը հաղես է գալիս ետադաս կիրառությամբ, ի տարբերություն գոյականական անդամի մյուս լրացումների, որոնց առավելապես բնորոշ է առաջադաս կիրառությունը (հարկ է նշել, որ ի տարբերություն հայերենի, գերմաներենում հատկացուցիչը ևս հանդես է գալիս ետադաս կիրառությամբ, սակայն տարբերվում է բայցահայտիցից այն բանով, որմիշտ դրվում է սեռական հոլովով): Սակայն մասնական բացահայտիչը կարող է նախորդել կամ հաջորդել բացահայտյալին և ուղեկցվում է *որպես, իբրև, ինչպես* շաղկապներով, օրինակ՝ «Աշտոր, իբրև ֆակուլտետի լավագույն ուսանող...», հնարավոր նաև՝ «Իբրև ֆակուլտետի լավագույն ուսանող, Աշտոր...»:

Գերմաներենում ազատ բացահայտիչը ևս ունի ետադաս կիրառություն, սակայն սերտ բացահայտիչի դեպքում հնարավոր է ինչպես ետադաս, այնպես էլ առաջադաս կիրառություն, կախված այն բանից թե տվյալ կապակցության մեջ որն է համարվում բացահայտյալը, քանի որ այստեղ բացահայտիչը չի տրոհվում: Այս դեպքում հաշվի է առնվում, ինչպես վերը նշեցինք, բացահայտյալի հոլովվելու հատկանիշը, առաջադաս՝ *Thomas Mann (die Werke Thomas Manns)*, ետադաս՝ *meine Tante Helga* (zu meiner Tante Helga):

Բացի այդ, բացահայտիչը ցուցաբերում է բերականորեն ավելի իֆքնությունություն և անկախություն իր լրացյալի նկատմամբ, քան գոյականական անդամի այլ լրացումները: Այդ ինքնուրույնությունն էլ բերում է բացահայտյալից նրա տրոհմանը³⁵: Բացահայտիչը գոյականական անդամի միակ լրացումն է, որը որպես կանոն հայերենում հանդես է գալիս տրոհված ձևով, ընդ որում

³³ Sbu E. Hentschel/H. Weydl, Handbuch der deutschen Grammatik, 3. Auflage, Berlin, 2003, էջ 402.

³⁴ Տես Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի պարզ նախադասության շարադասությունը, 152 էջ:

³⁵ Տես Խ. Բաղիկյան, նշվ աշխ., 152 էջ:

այն տրոհվում է իր բոլոր տեսակներով³⁶: Տրոհված բացահայտիչը բացահայտ-
յալից և մյուս անդամներից անջատվում է բուժով և ստորակետով, մասնականը՝
ստորակետներով: Տրոհված բացահայտիչը սովորաբար արտահայտված է
լինում մեկից ավելի բառերով³⁷: Գերմաներենում տրոհվում է միայն ազատ
բացահայտիչը, ընդ որում ստորակետներով, իսկ սերտ բացահայտիչը չի
տրոհվում: Ստացվում է, որ այս հատկանիշը միանշանակ չի կարող վերաբերել
երկու լեզուներին էլ:

Այսպիսով, երկու լեզուներում էլ բացահայտիչը որպես գոյականական
անդամի լրացում չունի միակարծիք սահմանում, իր առանձնահատկություն-
ներով հանդերձ, այն որպես լրացում կամ ավանդաբար ընդունվում է, որոշակի
վերապահումներով/նկատառումներով, կամ մերժվում հայ քերականների կող-
մից, իսկ ժամանակակից գերմաներենում այն մտնելով ընդհանուր «որոշիչ»
հակասության մեջ, այնուամենայնիվ առանձնացվում որպես վերջինիս հատուկ
տեսակ և հանդես գալիս առանձին եզրույթով:

Բացահայտիչը երկու լեզուներում էլ ունենալով նույն գործառույթը, ցու-
ցաբերում է նաև բնորոշ յուրահատկություններ: Երկու լեզուներում էլ տարբեր է
նաև բացահայտի տեսակների առանձնացումը, որի հարցում քերականների
մոտ ևս չկա միակարծություն, թերևս կարելի փաստել, որ հայերենում հիմնա-
կանում առանձնացվում բացահայտիչի՝ երեք, իսկ գերմաներենում երկու տիպ:

Թերևս երկու լեզուներում էլ ընդհանուր է այն, որ որպես բացահայտիչ
հանդես են գալիս գոյականը կամ գոյականաբար գործածվող բառերը, որոնք
ևս կարող են ունենալ լրացումներ: Ինչպես հայերենում, այնպես էլ գերմա-
ներենում, բացահայտիչի հիմնական հատկանիշները ունեն որոշակի շեղումներ,
այսինքն համաձայնեցումը բացահայտյալի հետ միշտ չէ որտեղի է ունենում,
բացահայտիչը պարտադիր ետադաս կիրառություն չունի, երբ խոսքը հայերենի
մասնական և գերմաներենի սերտ բացահայտիչների մասին է, վերջիններս
կարող են լինել ինչպես ետադաս, այնպես էլ առաջադաս: Ինչպես նաև
պարտադիր չէ տրոհումը գերմաներենի սերտ բացահայտիչի դեպքում:

The Nature and Types of Apposition in Modern Armenian and German

The article touches upon the main problems of apposition in Modern Armenian and German from formal, semantic and functional perspectives. A number of viewpoints on the aspect of analysis of the apposition in both languages have been analyzed inhere as well. One of the standpoints referred to is closely connected with the syntactic function of apposition and classification within the basic concepts of sentence analysis. Thus, the comparison of apposition in Armenian and German has been carried out in accordance with the typological, functional and semantic criteria. Consequently, the article comprises the basic types of apposition in German and Armenian.

³⁶ Տես Ս. Մարության, նշվ. աշխ., էջ 84

³⁷ Տես Գ. Զահուկյան, Գայոց լեզվի տեսություն, Ե. 1974, էջ 557-558